[35բ] 288 *ԽԲ.*[1] *Աշխարհ Ասիո[յ] Հնդկաստան*[2] *է, յերի կալով Արեաց եւ Սկիւթաց[ւ]ոց*[3], *առ Եմաւոն լեր՟ամբ*[4], *եւ անդր*[5] *եւս քան զնա՝ մինչեւ ցԵմոդա[յ]*[6] *լեառն եւ ցՃէնաց*[7] *սահման։* 289 *Եւ բաժանեալ են Հնդի՛կք*[8] *յերկուս՝ յարեւելից եւ յարեւմտից Գանգ՟էս*[9] *գետոյ։* 290 *Եւ ցուցանէ Պտղոմէոս, թէ եւթն*[10] *գետք են յատուկք*[11] *անուամբք, որ ի մի եկեալ՝ կոչին Փիսոն, առ Մերկիմաստակաւքն։* 291 *Բայց երեք*[12] *են գետք՝ բ[ղ]խեալ*[13] *առ Մերկիմաստակաւքն. նախ՝ Դամունաս գետ, ապա՝ Գանգէս, ապա՝ Սառաբոս*[14], *եւ խառնեալ ապա՝ Իմոյն կոչին։*

292 *Են ընդ աջմէ Ինդոս գետոյն ազգ[ք]*[15] *յիսուն եւ եւթն*[16]*։* 293 *Լինի անդ [երէ՝ յամոյրանման սրեղջիւր, որ սպանանէ զառիւծ. եւ լինի անդ]*[17] *հրեաշիր, եւ դահանակ եւ անապ ազնիւ։* 294 *Եւ ազգն Մերկիմաստնոց ոչ ուտեն այլ ինչ՝ բայց միայն միրգ եւ բրինձ եւ շաքար, եւ կոչեն զնոսա Պարսիկք Շամն եւ Բրամն ազգ։* 295 *Եւ ընդ վայր թողեալ է նոցա զկա՛նայս*[18]*՝ հանդերձ հաւտիւք*[19]*։* 296 *Եւ ընդ առաւաւտն Արեգականն երկիր պագանեն՝ ասելով. «Մեք զքեզ կարծեմք*[20]*, թէ այլ ոք է վերագոյն քո՝ նմա լիցի՛ ծունրս մեր»։* 297 *Լինի անդ ըն*<u>*ձ*</u>*ուղտք*[21]*, Պարսիկք կոչեն շտրպաշանք։*

298 *Եւ են եւթանասուն եւ երկու*[22] *ազգ[ք]*[23] *յարեւելից Ինդոս*[24] *գետո[յ]՝ մինչեւ*

---

1 *V* ̅լ̅զ, *S* ԼԵ. *փխ* ԽԲ. *(վեր.՝ ըստ նախորդների)*

2 *Կողքի ձախ լուսանցքում ուշ ձեռագրով, երկար պատուոյ նշանների մէջ, 2 տողով «ծանօթագրուած» է.* «աշխարհ հնդկաց» *(առաջին բառը՝* **ա**+*ալիքաձեւ գաղափարագիր)*

3 *V* Սկիւթացոց *փխ* Սկիւթացւոց *(վեր.՝ Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Ա.48, Գ.25, Ե.102 եւն)*

4 *V* լերեամբ *փխ* լերամբ *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.4, Գ.5, Ե.69, 134, 283 եւն)*

5 *V* անտր *փխ* անդր *(վեր. Սուքրեանի. տե՛ս բարբառային* **Դ** → **Տ**. *հմմտ. Ա.39, Բ.37, Ե.74,136 եւն)*

6 *VS* ցԻմադա *փխ* ցԵմոդա[յ] *(վեր.՝ ըստ նախ. Ե.278)*

7 *VS* ցՃենաց *փխ* ցՃէնաց *(վեր. հմմտ. Ե.328, 330)*

8 *V* Հնդուկք *փխ* Հնդիկք *(վեր. Սուքրեանի)*

9 *V* Գանգրէս *փխ* Գանգէս *(վեր. Սուքրեանի՝ ըստ նախ. Ե.291-ի. զուգէ, վերականգնելի է* Ինդոս *փխն.* Գանգէս՝ *իբրեւ ոչ թէ հեղինակի, այլ գրչի վրիպում. հմմտ. յաջորդիւ՝ նախ. Ե.292, 298)*

10 *V* ̅է, *S* եօթն *փխ* եւթն *(վեր.՝ ըստ նախորդների, տե՛ս նախ. Ա.8, Բ.10, 16, 18)*

11 *S* յատուկ *փխ* յատուկք *(V)*

12 *V* ̅գ

13 *VS* բխեալ *փխ* բ[ղ]խեալ *(վեր.՝ ըստ նախորդների, տե՛ս օր.՝ նախ. Դ.23, Ե.78, 119, 133, 206 եւն)*

14 *V* Սառարոս *փխ* Սառաբոս *(վեր. Սուքրեանի՝ ըստ Պտղոմէոսի. տե՛ս ուշ երկաթագիր* **Բ** → **Ր***)*

15 *VS* ազգ *փխ* ազգ[ք] *(վեր.՝ ըստ Բ.13, Գ.56 եւն)*

16 *V* ̅ծ̅է, *S* յիսուն եւ եօթն *փխ* յիսուն եւ եւթն *(վեր.՝ ըստ նախորդների, տե՛ս նախ. Ա.8, Բ.10, 16, 18. համառօտի բնագիրն է.* «ունի յարեւմտեան կողմանն (*AE* արեւմտակողմ) ազգս յիսուն եւ հինգ (*D* ̅ծ̅ե), իսկ յարեւելեանն (*AE* արեւելակողմն)՝ ազգս (*DPv չիք* ազգս) եւթանասուն եւ երկու», *հմմտ. բոլորագիր* **է** → **ե***)*

17 *VS չիք* երէ յամոյրանման ... լինի անդ *(2 տող) (վեր.՝ ըստ համառօտի* (*տե՛ս* **Լինի անդ ... լինի անդ**), *որը խառը հերթականութեամբ խմբագրելմէկտեղել է յիշուած կենդանիներին* (*ընդգծում ենք V-ում կորսուածները, որոնց վերականգնումը տուել ենք յայտնի զգուշաւորութեամբ*)՝ «Լինի ի Հնդիկս (*A* Հնդիկքս, *E* Հանդիկք) **երէ** (*Pv* էրէ) **յամոյրանման սրեղջիւր** (*v*[1] որ եղջերաւ), **որ սպանանէ զառիւծ**, եւ հրեշ երէ, եւ **այլ գազան՝ նման առիւծու** (*Pv* առիւծոյ), **բայց կնճիթն սուր եւ երկայն**, եւ ընձուղտք, եւ **կորեանք**, եւ պապկայք (*DPv* կապիկք), եւ աքաղաղք փետրամաւրուսք, եւ փիղք, եւ վագերք, եւ **վիշապք**, մեծ մրջմունք (*DPv* եւ մրջմունք մեծամեծք) եւ մկունք բեշ (*D* բեշկոյ, *Pv* բեշկ) մշկոյ, եւ **կորկորդիլ** (*D* կրոկոդիղոս, *Pv* կոկորդիլ) **գազան**, եւ միեղջերու (*AE* միեղջիւրի), **որ է մեծ գազան եւ ի վերայ ոդին՝ ճանկ** (*AE* ճագք), **եւ զփիղ լեզուաւն սպանանէ**, եւ պասկուճ հաւ, եւ մուշկ (*v*[1] մշտկ) երէ (*Pv* էրէ) եւ էշ եղջերաւոր» (*համառօտում նոյն կերպ խմբագրուած-մէկտեղուած են նաեւ երկրի ցեղերը, մետաղներն ու համեմունքները*). *V-ում յաջորդող* հրեաշիր-*ը հմմտ. համառօտի* հրեշ երէ-*ի հետ)*

18 *V* զկայնայս *[յ-ն գրուած է* **ան**-*ի տակ] փխ* զկանայս *(վեր. Սուքրեանի. հմմտ. նախ. Ե.78)*

19 *V-ում բառի* **հ** *սկզբնատառի վրայ անհասկանալի կայծակնաձեւ նշան կայ*

20 *V* կարծենք *փխ* կարծեմք *(վեր. Սուքրեանի)*

21 *V* ընձուխտք *փխ* ընձուղտք *(վեր. Սուքրեանի՝ ըստ նախ. Դ.47. տե՛ս բանաւոր* **Ղ** → **Խ***)*

22 *V* ̅հ̅բ, *S* եօթանասուն եւ երկու *փխ* եւթանասուն եւ երկու *(վեր.՝ ըստ նախ. Ա.8, Բ.10, 16, 18)*

23 *VS* ազգ *փխ* ազգ[ք] *(վեր.՝ ըստ այլոց, տե՛ս օր.՝ նախ. Բ.13, Գ.56 եւն)*

24 *VS* Ընդոս *փխ* Ինդոս *(վեր.՝ ըստ նախորդի, տե՛ս նախ. Ե.292)*